

ու զայրացկոտ արմատականութեան՝ 1840էն մինչև 1860 կըրցան, քաղաքակրթութեան վերոյիշեալ նիւթական միջոցներն յօշուտ 'ի կիր արկանելով, զօրացունել ամիրաներուն շափազանցեալ զօրութեան ու ձեռնմխութեանց հանդէպ՝ ժողովուրդին բանիրուն մասին ներշնչակող ազդեցութիւններն իրաւացի, անշուշտ այդ շրջումին պահանջած բնական վէճերու և կոխներու ալ հանելով տաքուկ բաժին մը հետաքրքրական:

Պոլիսի այդ բանիրուն էանաֆն՝ որ ամէնէն յարմարն էր ամիրայութեան արմատացած ու պատատուած զեղծունեիքն յօտելու մաքրելու, ի վաղուց ունեցած է մեծ անուն՝ իբրև քաղաքացի, իբրև ճարտարազէտ ու բանխմաց խօսող, իբրև կրթող և մղող՝ արճուղ անատուրցին, իբրև մանտանդ բանասէր ու կրթասէր տարր մը, և իր մէջէն ելած են ամէն մասամբ մեծ մարդիկ, ամիրաներէն ալ մեծ երբեմն: Այդ ընտիր էանաֆին մէջ ամէնէն մեծ կշիռն ունեցած են՝ զէթ մինչև 1870՝ Պոլիսի ծածկազէտ քահանայորդիներէն ու վարժապետներէն զոս՝ ոսկերիչներն ու դարձեալ՝ պուսեցի, զմիւսնացի, տիվրիկցի, կեսարացի, պանաբընացի վաճառականներն ու պետական զբաղէտ պաշտօնեաներէն ու մանք՝ մեծ մասով Սամաթիայէն, Բերայէն, ինչ որ Օրթազիւղէն ու Հասզիւղէն, Գում-Գաբույէն և Սկիւտարէն գերազանցապէս ճարտար խօսելու կշռելու և կրթելու մէջ:

Ասոնց ներգործութիւններովն էր՝ որ 1836ին՝ 1 ամիրաներէն ուսուցիչներն ու երկիւղածները՝ Պատրիարքարան հաւաքուելով, ի ժողով կը բաղմին «Ազաւնի» Ստեփանոս Պատրիարքին Նախագահութեամբ՝

1. Ասկէ երկու տարի առաջ ձեռնարկած է ու շինած է Ս. Երուսաղէմի աթոռոյն փոխամորդո Յովհաննիէս Զմիւռնացի վարդապետը՝ ապա պատրիարք Երուսաղէմի՝ Պոլիսի Երուսաղէմական փոխամորդարամը՝ ակնարկութեամբ և նպաստով ալ Պեգմեան Յարութիւմ Բիւիշ Միքայէլ և ճամիկ ամիրամերուն. այս շէնքն է որ կը կոչուի Տում Երուսաղէմի կամ Երուսաղէմատում: